

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին

Հոդված 1. «Եկամտահարկի մասին» 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-183 Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 7-րդ հոդվածի ա) կետում «վճարվող» բառից հետո լրացնել «պատվովճարները, գիտական կոչման հավելավճարները» բառերը:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՕՐԵՆՔԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«Եկամտահարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու նպատակն է ՀՀ օրենսդրությամբ սահմանված պատվովճարները, գիտական կոչում ունեցող անձանց տրվող հավելավճարները ազատել եկամտահարկով հարկելուց, քանի որ դրանք եկամուտների հարկման դասական առումով եկամուտ չեն եւ ըստ էության չեն մտնում «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածով նախատեսված համախառն եկամուտների թվարկման մեջ: Բացի այդ, թեեւ պատվովճարները ներկայումս սահմանված չեն որպես եկամուտ չհամարվող տարր, սակայն դրանք չեն ենթարկվում հարկման, ինչն արդարացված է նաեւ վարչարարության իմաստով, իսկ գիտական կոչման համար տրվող հավելավճարները (գիտական աշխատանքներում ներգրավված գիտության թեկնածուների համար այն սահմանված է 10000 դրամ, իսկ դոկտորների համար՝ 20000 դրամ) իրենց փոքր մեծությամբ չեն կարող բավարար համարվել գիտաշխատողի համար եւ այն լրացուցիչ հարկելը չի արդարացնում այն նպատակը, հանուն որի այն տրվում է: Ըստ էության այս վճարները համարվում են ստատուսային: Օրինագիծը համահունչ է նաեւ ներկայումս գիտության դերի բարձրացմանը միտված պետական ծրագրերին եւ գիտաշխատողների սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման վերաբերյալ հայտարարված քաղաքականությանը:

Հեղինակներ՝ [Վահան Հովհաննեսյան](#), [Արծվիկ Մինասյան](#), [Արտյուշ Շահբազյան](#), [Ռուզաննա Առաքելյան](#), [Արա Նռանյան](#)